



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ ենթակետի և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.07.2018թ. թիվ 13/15-Լ որոշմամբ հաստատված Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի 5-րդ կետի պահանջներով,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդի 18.12.2019թ. թիվ 24/22-Լ որոշմամբ սահմանված՝ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպանների հաստիքների թվաքանակը (59),

հաշվի առնելով հանրային պաշտպանների մասնագիտացումները սահմանելու և հաստիքները տեղաբաշխելու անհրաժեշտությունը,

ի գիտություն ընդունելով Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 2022 թվականի հունվարի 1-ից **59 (հիսունինը)** հանրային պաշտպանի հաստիքները տեղաբաշխել հետևյալ կերպ՝

- 1) Երևան քաղաքում՝ **30 (երեսուն)** հաստիք, որից 22 (քսաներկու) հաստիքը՝ քրեաիրավական մասնագիտացմամբ, իսկ 8 (ութ) հաստիքը՝ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) մասնագիտացմամբ.
- 2) մարզերում՝ **29 (քսանինը)** հաստիք՝ համաձայն հավելվածի:

2. 2022 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 06.11.2020թ. թիվ 378-Լ որոշումը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Սիմոն Բաբայան

02 նոյեմբեր 2021թ.
թիվ 264-Լ
ք.Երևան